ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

Ք.Գավառ 17.01.2022թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի գլխավոր քարտուղար Ս. Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Հ. Ղափանցյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա , այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021թ.դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշմամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին տրվող բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին,, հոդվածով 56472,8 հազ. ՀՀ դրամ գումարը հատկացնում է Կատարողին:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը հատկացվում է ,,Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոնին թատերական ներկայացումների հետ կապված ծախսերի իրականացման նպատակով, ըստ նպատակային օգտագործման հանձնարարականի:

1.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ներառում է աշխատանքների և ծառայությունների արժեքը, ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

2. Հաշվետվությունը

2.1. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ուսուցմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կատարողի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2. Կատարողը պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին գրավոր հաշվետվությունը պատվիրատուին ներկայացնել .ամբողջական կատարման ժամկետի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. Պատվիրատուն քննարկում է սույն պայմանագրի 2.2 կետում նշված հաշվետվությունները և այդ կապակցությամբ համապատասխան որոշում է ընդունում դրանք ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն ծառայությունը համապատասխանում են սույն պայմանագրով նախատեսված ծառայություններին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը ընդունվելու դեպքում կատարողը այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցում է կատարողին: Սահմանված կարգով ծանուցում չտրամադրվելու դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված:

2.5. Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը չընդունվելու դեպքում, կատարողը պարտավորվում է անվճար՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել կատարողի կողմից արձանագրված անհամապատասխանությունները: Եթե արձանագրված անհամապատասխանությունները հնարավոր չէ վերացնել, ապա կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

3. Նվիրաբերության տրամադրման պայմանները

3.1. Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետի նշված գումարը սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայն վճարման ժամանակացույցի փոխանցում է կատարողին:

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը կատարողը տնօրինում է դրամաշնորհների գումարը գործող օրենքի համապատասխան:

3.3. Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքները կատարողի կողմից պետք է կատարվեն մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ֆորս-մաժոր/

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5. Այլ դրույթներ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

5.4. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոն
Ք. Գավառ	ՀՎՀՀ 08401889
ՀՎՀՀ 08404767	
ՀՀ 900171078521	Գանձապետական հ/հ 900178000098
ՀՀ ՖՀ Գործառնական վարչություն	
Գլխավոր քարտուղար	
----------Ս.Խլոթյան	Տնօրեն----------Հ. Ղափանցյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Դրամատիկական թատրոնին 2022թ. տրամադրվելիք

գումարներն ըստ ամսական բացվածքի

Թատերական ներկայացումների հետ կապված ծախսեր

N	Ամիսը	Գումարը(հազար դրամ)՝աճողական
1	Հունվար	-
2	Փետրվար	7059,1
3	Մարտ	14118,2
4	Ապրիլ	18824,3
5	Մայիս	23530,4
6	Հունիս	28236,4
7	Հուլիս	32942,4
8	Օգոստոս	37648,4
9	Սեպտեմբեր	42354,6
10	Հոկտեմբեր	46927,3
11	Նոյեմբեր	51500,0
12	Դեկտեմբեր	56472,8

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

ՀՀ ՖՆ Գործառ.վարչություն

ՀՎՀՀ 08404767 ՀՀ՝ 900171078521

Գլխավոր քարտուղար

Ս.Խլղաթյան

Կ ա տ ա ր ո ղ

Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի

անվան դրամատիկական թատրոն

ՀՎՀՀ 08401889

Գանձապետական հ/հ 900178000098

Տնօրեն Հ. Ղափանցյան